

5.	ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOLOGY ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ
----	---

ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՀՏԴ 81'373

DOI: 10.56246/18294480-2024.17-30

ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլիսուտ՝ asoyan.60@mail.ru

Մեծ է Մխիթարյանների դերը հայ մշակույթի զարգացման մեջ: Նրանք բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարել հայոց ու համաշխարհային պատմության, աշխարհագրության, բուսաբանության, բժշկության, լեզուների և այլ գիտությունների բնագավառներում, կատարել են թարգմանություններ եվրոպական գրողների ստեղծագործություններից: Բացել են դպրոցներ ու դասավանդել տարբեր առարկաներ, գրել են դասագրքեր: Սակայն Մխիթարյանների գործունեությունը ավելի արդյունավետ է եղել հայոց լեզվի ուսումնասիրության մեջ: Նրանք զբաղվել են նոր գրական հայերենի մշակման հարցերով, գրել են հին հայերենի քերականություններ՝ ազատելով այն լատիներենի ազդեցությունից: Մեծ է նրանց ավանդը հայ նոր բառարանագրության զարգացման մեջ: Կարևոր էին հատկապես երկլեզվյան և բազմալեզվյան բառարանները, որոնք նպաստում էին օտար լեզուներ սովորելուն:

Բառարանագրությունը հին պատմություն ունի, իսկ հայ բառարանագրությունը սկզբնավորվել է միայն 5-րդ դարից՝ կապված գրերի ստեղծման հետ, և զարգացման որոշակի ճանապարհ է անցել՝ այդ ոլորտում ձևավորելով ավանդներ: Մխիթար Սեբաստացին և նրա աշակերտները դառնում են հայ նոր բառարանագրության հիմնադիրը: Թերություններից զերծ բառարաններ ստեղծելը հրամայական պահանջ էր դարձել, քանի որ օրեցօր զարգացող գրականությունը, կրթական գործի աշխուժացումը, արևմտահայ աշխարհաբարի կիրառության շրջանակների ընդլայնումը, գրաբարի ուսումնասիրության խորացումը նոր իրավիճակ էին ստեղծել հայկական միջավայրում: Մխիթարյանները հաջողությամբ հաղթահարեցին այդ դժվարությունները և ստեղծեցին մինչև օրս իրենց արդիականությունը չկորցրած բառարաններ:

Բանալի բառեր՝ հայոց լեզու, բառարան, ֆրանսերեն, թուրքերեն, բառերի բացատրություններ, հին հայերեն, բառացանկ, բառարանագրություն:

Նախաբան: Բառարանագրությունն ընդհանրապես հազարամյակների պատմություն ունի: Հայ բառարանագրությունը, սկիզբ առնելով 5-րդ դարից, զարգացման որոշակի ճանապարհ է անցել՝ այդ ոլորտում ձևավորելով ավանդներ և ստեղծելով բազմաթիվ ու բազմատեսակ բառարաններ, որոնք իրավամբ հարստացնում են թե՛ հայերենագիտությունը, թե՛ ոգևորում նորանոր նվաճումներով: Գրերի տեղծումից հետո, մասնավորապես կապված գրավոր մշակույթի բուռն զարգացման հետ, գրավոր տեքստերում, սկսած Աստվածաշնչից, երևան են գալիս անհասկանալի ու խրթին թվացող բառերի բացատրություններ, որոնք հետագայում մեծ տարածում են գտնում և հանդես են գալիս բառացանկերի տեսքով՝ այդպես փորձելով խուսափել տեքստերը ծանրաբեռնելուց: Ժամանակի ընթացքում կուտակված հարուստ բառաբացատրական նյութի հիմքի վրա, 11-12-րդ դարերից սկսած, կազմվեցին առաջին բառարանները: Այնուամենայնիվ, հայ բառարանագրության զարգացումը կապվում է Մխիթարյան միաբանության հայրերի ծավալած հայերենագիտական գործունեության հետ: Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» (Վենետիկ, հտ. 1, 1749, հտ. 2, 1769) բառարանով սկզբնավորվում է հայ նոր բառարանագրությունը: Այն իր ընդգրկած նյութի ծավալով, կազմության սկզբունքներով, նպատակադրմամբ բոլորովին նոր երևույթ էր հայերենագիտության մեջ, իր հատկանիշներով չէր զիջում եվրոպականին և այդ ոլորտում նախանշում էր զարգացման նոր ուղի՝ առաջադրելով ավելի բարձր չափանիշներ:

Վերլուծություն: Բնավորվելով Վենետիկում՝ Սբ. Ղազար կղզում, այնուհետև նաև Վիեննայում՝ Մխիթարյան միաբանությունը տարբեր ուղղություններով հայ մշակույթը զարգացնելու նպատակ էր հետապնդում: Ժամանակը ցույց տվեց, որ նրանց ուշադրության կենտրոնում ընդհանրապես հայագիտությունն էր, մասնավորապես՝ հայերենագիտությունը, իսկ այս պարագայում՝ բառարանագրությունը:

Աչքի առաջ ունենալով նախորդների փորձը՝ Մխիթարյանները ձեռնամուխ եղան բառարաններ կազմելու նոր, գիտական որոշակի սկզբունքների մշակմանը: Նախորդ շրջանում ստեղծված բառարանները սխալաշատ էին և շատ թերություններ ունեին, ուստի դրանց գործածությունը այնքան էլ նպատակահարմար չէր: Սեբաստացին անում է հետևյալ դիտարկումները. այդ բառարաններում առկա բառամթերքը շատ աղքատիկ է, շատ են սխալները, բառերի բացատրությունները խրթին են ու անհասկանալի, բառագործածության մեջ իշխում է կամայականությունը (3, 5):: Սեբաստացու և նրա հիմնած միաբանության հայրերի նպատակը ժողովրդին թերություններից զերծ բառարան տալն էր, որի կարիքը շատ էր զգացվում (1, 3-126): Պետք է ասել, որ այս խնդիրը հասարակական հնչեղություն էր ստացել, քանի որ

օրեցօր զարգացող գրականությունը, կրթական գործի աշխուժացումը, արևմտահայ աշխարհաբարի կիրառության շրջանակների ընդլայնումը, գրաբարի ուսումնասիրության խորացումը առաջադրում էին շուտափույթ նոր բառարան ունենալու խնդիրը՝ այդպես բացատելով կամայականությունները բառընտրության, բառագործածության, բառապաշարի հարստացման, բառաբացատրությունների առումներով: Բանն այն է, որ բացատրական բառարաններ ստեղծելու ուղղությամբ շատերն էին աշխատում՝ հաճախ ցուցաբերելով անփութություն, շտապողականություն, անձեռնհասություն, սիրողական մակարդակ: Ահա, մի կողմից հասարակական պահանջարկը, մյուս կողմից՝ բառարանագրության ոլորտում եղած բացթողումները Սեբաստացուն, իսկ հետո նաև նրա աշակերտներին մղեցին իրենց մանրակրկիտ և տքնաջան աշխատանքով ցուցաբերել նոր մոտեցում՝ առաջադրելով նոր ու առավել բարձր չափանիշներ:

Մյուս կարևոր հարցը, որ փորձում էին լուծել Մխիթարյանները, կապված էր բառարանների կազմության սկզբունքների մշակման հետ: Ամենամեծ դժվարությունը Սեբաստացու ժամանակ կապված էր լեզվի հետ: 18-րդ դարում հրապարակի վրա էին և՛ գրաբարը, և՛ աշխարհաբարը, և՛ բարբառները, վերջիններիս միջոցով էր իրականանում աշխարհաբարի գործածությունը: Այդ լեզվաորակներից յուրաքանչյուրն ուներ իր անհարմարությունները. գրաբարը, չնայած գրավոր խոսքում կիրառական գերազանցությանը, վաղուց դարձել էր անհասկանալի, աշխարհաբարը քերականորեն անկազմակերպ էր, բառապաշարն էլ օտար բառերով գերհագեցած, բարբառների պարագայում էլ փոխադարձ հասկանալիության խնդիր էր առաջանում, ուստի կողմնորոշվել էր պետք: Մխիթարյանները, ելնելով հայերենի մաքրությունը պահպանելու՝ իրենց իսկ առաջադրած պահանջից, միանգամից մերժում են աշխարհաբարով տալ գլխաբառերի բացատրությունները և ընտրում են գրաբարը, սակայն, ըստ անհրաժեշտության, որոշ դեպքերում չեն խուսափում աշխարհաբարի ծառայություններից:

Մյուս խնդիրը կապված էր բառահոդվածի կազմության հետ, որը մինչ Մխիթարյանները շատ անկատար էին: Այստեղ ևս Մխիթարյանները ցուցաբերեցին որոշակի մոտեցում. գլխաբառից հետո տրվում էին քերականական նշումները, դրանց հետևում էր բացատրությունը կամ բացատրությունները, հնարավորության դեպքում բերվում էին բնագրային օրինակներ, որոնց օգնությամբ ճշտվում էին բառի գործածության սահմանները՝ կապված նրա իմաստային առանձնահատկությունների հետ: Պետք է ասել, որ բառարանից բառարան Մխիթարյանները կատարելագործում էին բացատրությունների համակարգը («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», 1836), իսկ գործնական – կիրառական նշանակություն ունեցող բառարաններում բացատրությունները տրվում էին նույնիսկ մեկ բառով («Առձեռն բառարան հայկազեան լեզուի»): Բոլոր դեպքերում փորձ էր արվում բացատրությունները ներկայացնել, ինչքան հնարավոր է, պարզ ու հասկանալի: Այդ նպատակով Մխիթարյանները շատ

էին դիմում թուրքերէն բառերի օգնությանը, քանի որ քաղաքական իրավիճակի բերումով հայերը լավ էին յուրացրել թուրքերէնը՝ ի տարբերություն հայերէնի:

Բառընտրությունը ևս լուրջ մոտեցում է պահանջել: 18-19-րդ դարերում հայերէնի բառապաշարը բազմաշերտ էր այն առումով, որ ներկայացնում էր գրաբարի, աշխարհաբարի, բարբառների, օտար բառերի մի ընդհանրական պատկեր, որը շատ էր դժվարացնում բառամթերքի ընտրություն կատարելու գործընթացը: Մխիթարյանները տարբերակում էին հասարակ և ընտիր ու վայելչակազմ բառեր և աշխատում էին բառարաններում ընդգրկել բոլոր գրաբարյան բառերը՝ որպէս ընտիր և վայելչակազմ, սակայն միշտ չէ, որ դա նրանց հաջողվում էր:

Մխիթարյանները, լինելով հմուտ հայկաբաններ, շատ լավ էին պատկերացնում լեզվի պատմական երևույթ լինելու հանգամանքը, ուստի իրավամբ կարծում էին, որ Հին հայկազյան բառարանը («Բառգիրք հայկազեան լեզուի», 1749-69) իր կարևոր գործառույթը կարող էր կատարել միայն մի որոշակի ժամանակահատվածում, այնուհետև հնանալու է և նոր բառարան կազմելու անհրաժեշտություն է առաջանալու՝ պայմանավորված նոր աղբյուրների ու նոր բառերի ի հայտ գալով, բառապաշարի իմաստաբանական զարգացմամբ, բացատրությունների և քերականական նշումների ճշգրտմամբ: Նոր հայկազյան բառարանի հեղինակները, բարձր գնահատելով Հին հայկազյան բառարանը, կարծում են, որ այն իր հարուստ բովանդակությամբ և ճիշտ ու հստակ բացատրություններով՝ հաստատված բնագրային օրինակներով, եզակի երևույթ է հայ բառարանագրության պատմության մեջ, միաժամանակ ոչ միայն չի զիջում եվրոպական բառարաններին, այլև շատ դեպքերում գերազանցում է նրանց՝ «իւիք իւիք յաղթօղ, քան թէ յաղթեալ»: Այնուամենայնիվ, նոր ժամանակներում բառարանագրության ոլորտում նոր խնդիրներ էին առաջացել, նոր հանգամանքներ էին ի հայտ եկել, որոնք լուծման կարիք ունեին: Նոր հայկազյան բառարանի ստեղծումը, փաստորեն, պայմանավորված էր նոր լեզվական իրավիճակով: «Հայկազյան նոր բառարանի կազմողները սոսկ բառեր ու օրինակներ գրանցողներ չեն եղել, այլ նրանք օգտագործած աղբյուրների և նախորդ բառարանների բոլոր հոդվածներն ուշիմ քննությամբ ստուգել են, հատկապէս հիմք ընդունելով ավելի լավ ձեռագրերը, կասկածելի բառերը կամ նրանց ստուգությունը և ուղղագրությունը որոշել օտար բնագրով, եթէ, իհարկէ, թարգմանություն է եղել», - հենվելով կազմողների վկայության վրա՝ գրում է Գ. Գասպարյանը (2,124): Այս բառարանից կազմողները դուրս են թողել բոլոր այն բառերը, որոնք ճիշտ չեն եղել կամ բնագրային օրինակներով հաստատված չեն եղել: Դրանց փոխարեն բառարան են ներառվել բազմաթիվ նոր բառեր, նոր նշանակություններ:

Հայտնի է, որ Մխիթարյանները կրթական գործի լավագույն կազմակերպիչներից էին, բացում էին վարժարաններ, գրում ու կազմում էին դասագրքեր, զբաղվում էին ուսուցչությամբ: Մ. Ավգերյանը բացառապէս գործնական-կիրառական նպատակով ձեռնամուխ եղավ Նոր հայկազյան բառարանի համառոտ

տարբերակի ստեղծմանը՝ ի նպաստ հայ մանուկների: Բառարանում, որ կոչվում էր «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», գլխաբառերը բերվում են առանց բացատրությունների և օրինակների, մեկնաբանվում են իրենց հոմանշային տարբերակներով: Այս բառարանը լավ ընդունվեց թե՛ աշակերտության, թե՛ ընդհանրապես հասարակության կողմից և իր մատչելիության շնորհիվ շատ արագ սպառվել է:

Ինչպես նշել ենք, բառարաններ կազմելիս բառարանագիրները պետք է հաղթահարեին մի շարք դժվարություններ: Մխիթարյանների պարագայում դրանք էին բառարանագրական փորձի անբավարար վիճակը, աշխարհաբարի քերականական և բառապաշարային անկատարությունը, բայց ամենամեծ խոչընդոտը հայերի հայերեն չիմանալն էր, որն ստիպում էր մեծ պատասխանատվությամբ վերաբերվել բառաբացատրություններին: Ահա, բառերը հայախոսների միջավայրում հասկանալի դարձնելու նպատակով կազմողները բառարաններում գրանցում էին դրանց թուրքերեն համարժեքները, ուստի ականա Մխիթարյանների կազմած բառարանները ձեռք են բերում երկլեզվյան բառարանների արժեք: Սակայն միայն սրանով չէ, որ բնութագրվում են այս բառարանները: Մասնավորապես Նոր հայկազյան բառարանը կարելի դիտել նաև որպես հայերեն-հունարեն, հայերեն-լատիներեն, գրաբար-աշխարհաբար բառարանների միասնություն կամ, ավելի ստույգ, բազմալեզվյան բառարան, որովհետև յուրաքանչյուր գլխաբառին հաջորդում են նրան համարժեք հունարեն, լատիներեն, տաճկերեն, շատ դեպքերում նաև եբրայերեն ու արաբերեն համարժեքները: Բառարանները կատարյալ ներկայացնելու ձգտումը Մխիթարյաններին մղում է հնարավորինս համակողմանիորեն ներկայացնելու բառահոդվածի գլխաբառը, ուստի օգտագործելով նոր-նոր ձևավորվող պատմահամեմատական լեզվաբանության հնարավորությունները՝ նրանք փորձում են տալ գլխաբառի ստուգաբանությունը՝ համեմատությամբ հունարենի, լատիներենի, պարսկերենի, սանսկրիտի, սեմական և այլ լեզուների (2,129): Փաստորեն գործ ունենք ոչ միայն բացատրական, այլև ստուգաբանական բառարանի հետ: Իր այս հատկանիշների շնորհիվ Նոր հայկազյան բառարանը մինչ օրս չի կորցրել իր արդիականությունը: Ավելացնենք նաև, որ եթե Նոր հայկազյան բառարանը ամփոփում էր գրաբարի՝ այդ շրջանում հայտնի և հասանելի ողջ բառազանձը՝ համապատասխան քերականական, բառաբացատրական բնութագրերով և բնագրային վկայություններով, ապա Առձեռն բառարանը այդ ամենը դնում էր գործնական հողի վրա, կիրառության մեջ:

Հայ ժողովրդի պատմական անցյալը բնութագրվում է և՛ նվաճումներով, և կորուստներով: Դարերով հայ ժողովուրդը գտնվել է օտար նվաճողների՝ պարսիկների, արաբների, թուրքերի գերիշխանության տակ, հարևանություն է արել արևելքի ժողովուրդների հետ, պատերազմական իրավիճակներում գաղթել են Եվրոպայի, Ասիայի, ամերիկյան տարբեր երկրներ, քաղաքական-հասարակական, տնտեսական ու մշակութային հարաբերություններ հաստատել բազմաթիվ ժողովուրդների հետ:

Փաստ է, որ հայոց մշակութային հզոր կենտրոններ են ստեղծվել Հայաստանից դուրս՝ Կ.Պոլսում, Վենետիկում, Ամստերդամում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլուր։ Այլ ժողովուրդների մեջ ապրելը ենթադրում էր ոչ միայն սեփական մշակույթի՝ որպես ազգային ինքնության պահպանության հիմքի զարգացում, այլև առաջադրում էր այդ ժողովուրդների լեզուներով հաղորդակցվելու պահանջ։ Այս դեպքում առանձնակի կարևորություն էր ստանում հենց բառարանագրությունը։ Այս պարագայում ևս առաջինը նախաձեռնողականությամբ հանդես են գալիս Մխիթարյանները, որոնք կազմում են երկլեզվյան մի շարք բառարաններ։ Նշանավոր Մխիթարյաններից բազմահմուտ հայկաբան Մանվել Զախջախյանն իր գործունեության մեծ մասը նվիրել է բառարանագրությանը։ Նա առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ հայերեն-իտալերեն երկլեզվյան բառարանի ստեղծմանը։ Նրա կազմած «Բառարան յիտալական լեզուէ ի հայ և ի տաճիկ բարբառ» բառարանը ավելի շատ գիտական ուսումնասիրություն էր, քան ուսուցողական-գործնական նպատակներ հետապնդող աշխատանք։ Առավել մշակված ու ամբողջական աշխատանք էր «Բառգիրք ի բարբառ Հայ և Իտալական» բառարանը (Վենետիկ, 1837), որն ընդգրկում է բազմաթիվ «նորահնարք» բառեր։ Այս բառարանը շատ բարձր է գնահատվել Ա. Ղազիկյանի և Հ. Աճառյանի կողմից։

Վիեննայի Մխիթարյաններից Փիլիպոս Ճամճյանը կազմեց «Բարբառարան իտալերէն-գաղղիերէն-հայերէն-տաճկերէն» բառարանը (Վիեննա, 1846), իսկ Եփրեմ Զագճյանը՝ «Նոր բարբառարան համառօտ հայերէն-տաճկերէն» բառարանը (Վիեննա, 1850)։ Այս աշխատանքները ստեղծվեցին ժամանակի հրամայականով իսկ երկրորդը պարզապես մեծ դեր խաղաց հատկապես հայերեն նոր սովորողների համար։

Մխիթարյանները հատկապես մեծ ուշադրություն էին դարձնում ֆրանսերենին, որը պարտադիր ուսումնական առարկա էր Մխիթարյանների հիմնած վարժարաններում։ Բնականաբար հայերեն-ֆրանսերեն բառարանի անհրաժեշտություն էր զգացվում։ Ահա, ֆրանսերենին առնչվող առաջին բառարանը ստեղծելու աշխատանքներին ձեռնամուխ եղավ Հարություն Ավգերյանը, որը հրապարակել է երկու բառարան, ընդ որում երկրորդը՝ «Բառագիրք գաղղիերէնէ ի հայ ի տաճիկ» (Վենետիկ, 1840), առաջինի (1812) լրամշակված հրատարակությունն էր։ Այս բառարանի բառամթերքի հիմնական մասը վերցված էր Սեբաստացու Հին հայկազյան բառարանից։ Բառարանի ստեղծման նպատակներից մեկը ֆրանսերենի միջոցով ընթերցողներին գիտական նորություններին ծանոթացնելն էր։ Հար. Ավգերյանը գիտակցական մոտեցում ուներ լեզվական իրավիճակի նկատմամբ։ Նա եվրոպական լեզուների մեջ կարևոր տեղ էր հատկացնում նաև անգլերենին, ըստ երևույթին, նկատի ունենալով այդ լեզվի տարածվածությունը գաղութատիրության ժամանակահատվածում, մասնավորապես հնդկահայ գաղութում, որտեղ հայ հոծ համայնքը հայերեն-անգլերեն բառարան ունենալու մեծ ցանկություն ուներ։ Ավգերյանի կազմած անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն բառարանները, որոնք

բավարարում էին անգլերեն սովորողների կարիքները, նորություն էին հայ բառարանագրության մեջ: Այս ասպարեզում Ավգերյանը նաև գերմաներեն-հայերեն և հունարեն-հայերեն բառարաններ ստեղծելու նախաձեռնություն է ցուցաբերել, սակայն դրանք մնացել են ձեռագիր վիճակում: Եթե գնահատելու լինենք Հար. Ավգերյանի բառարանագրական գործունեությունը, ապա պետք է ասել, որ նրա կազմած բառարանները «այսօր պատմական մեծ նշանակություն ունեն,որոնք քառորդ դարից ավելի օգտագործվում էին որպես արժեքավոր աշխատություններ» (2, 156):

Համառոտ անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն, հայերեն-անգլերեն-տաճկերեն բառարաններ է կազմել նաև Վենետիկի միաբանության արքահայր Սուքիաս Սոմայանը, որոնք փոքրածավալ են և հիմնականում հասցեագրված են դպրոցականներին: Սոմայանի ավանդը մեծ է նաև այլ հեղինակների հեղինակած բառարանները տպագրության խրախուսելու գործում:

Ինչպես կարելի էր նկատել ստեղծվող բառարաններից գրեթե յուրաքանչյուրում թուրքերենը (տաճկերեն) առկա է եթե ոչ որպես գլխաբառ, ապա բառերը բացատրելու միջոց (արդեն նշվել է, որ արևմտահայությունը ավելի լավ էր տիրապետում թուրքերենին): Թուրքերենի իմացությունը պարտադիր էր նաև նրանով, որ այն՝ որպես պետական լեզու, ուսումնասիրվում էր դպրոցներում: Բնականաբար որևէ լեզու սովորելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ բառարան: Վիեննայի Մխիթարյաններից Հակոբոս Պողաճյանը դպրոցների կարիքները բավարարելու համար հրատարակում է հայերեն-տաճկերեն և տաճկերեն-հայերեն համառոտ բառարանները: Նշենք, որ Պողաճյանի բառարաններում ներկա-յացված է մեսրոպատառ թուրքերեն՝ դրանց օգտագործումը հեշտացնելու և բոլորին հասանելի դարձնելու մտահոգությամբ:

Եզրակացություն: Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մխիթարյան միաբանության հայերը, սկսած Մխիթար Սեբաստացուց, մեծ հետաքրքրություն են ցուցաբերել բառարանագրության նկատմամբ, ստեղծել են մնայուն արժեքներ, որոնք կարևոր դեր են խաղացել թե՛ հայերենի, թե՛ այլ լեզուների յուրացման, թե՛ ուսումնական գործընթացներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասոյան Թ., Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը, Երևան, 2001:
2. Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968:
3. Սեբաստացի Մ., Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հտ. 1, 1749, հտ. 2, 1769:

LEXICOGRAPHICAL ACTIVITY OF THE MKHITARIANS

ASOYAN TATUL

*PhD in Philological Sciences, Associate Professor
Scientific Researcher of Language Institute named after H. Acharyan, NASRA
Head of Faculty of Humanities, Gavar State University
e-mail: asoyan.60@mail.ru*

The role of the Mkhitarians in the development of Armenian culture is significant. They have done many studies in the fields of Armenian and World history, Geography, Botany, Medicine, languages and other sciences, they have made translations of the works of European writers. They opened schools, taught various subjects, and wrote textbooks. However, the activities of the Mkhitarians were more effective in the study of the Armenian language. They dealt with the development of new literary Armenian and wrote the grammar of ancient Armenian, freeing it from the Latin influence. Their contribution to the development of new Armenian lexicography is of great importance. Bilingual and multilingual dictionaries were especially important, which contributed to learning foreign languages.

Lexicography has an ancient history, and Armenian lexicography was initiated only in the 5th century, in connection with the creation of letters, and has gone a certain way of development. Mkhitar Sebastatsi and his students became the founders of the new Armenian lexicography. Creating dictionaries free of defects became an imperative requirement, because the day by day developing literature, the revitalization of educational work, the expansion of the scope of the application of the Western Armenian philology, the deepening of the study of the language had created a new situation in the Armenian medium. However, they had to overcome a number of difficulties related to the choice of vocabulary, the development of scientific principles for creating a dictionary, vocabulary and other issues. The Mkhitaryans successfully overcame these difficulties and created dictionaries that have not lost their relevance to this day.

Keywords: *Armenian language, dictionary, French, Turkish, explanation of words, old Armenian, glossary, lexicography.*

О ЛЕКСИКОГРАФИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МХИТАРИСТОВ

АСОЯН ТАТУЛ

Кандидат филологических наук, доцент

Научный сотрудник института языков им. Г. Ачаряна НАН РА

электронная почта: asoyan.60@mail.ru

Велика роль Мхитаристов в развитии армянской культуры. Об этом свидетельствует огромное количество исследований в области армянской и всемирной истории, географии, ботаники, медицины, языков и других наук, переводы произведений европейских писателей. Велика также их просветительская деятельность: открытие школ, издание и публикация учебников и преподавательская деятельность. Бесспорен неоценимый вклад Мхитаристов в деле изучения армянского языка. Они занимались развитием нового литературного армянского языка, написали грамматику древнеармянского языка, избавив его от влияния латыни. Их вклад в развитие новой армянской лексикографии велик. Особое значение имели двуязычные и многоязычные словари, что способствовало изучению иностранных языков.

Лексикография имеет древнюю историю, а армянская лексикография возникла лишь в V веке в связи с созданием письма и прошла определенный путь развития. Мхитар Себасти и его ученики становятся основоположниками новой армянской лексикографии. Создание словарей, без недостатков, стало настоящим требованием, поскольку день ото дня развивающаяся литература, активизация просветительской работы, расширение сферы применения западноармянской филологии, углубление изучения языка создали новую ситуацию в армянской среде. Мхитаристы успешно преодолели эти трудности и создали словари, не потерявшие своей актуальности и по сей день.

Ключевые слова: армянский язык, словарь, французский, турецкий, толкования слов, древнеармянский, глоссарий.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 01.09.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 14.09.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: